

ARMENIAN
HOLY APOSTOLIC CHURCH
MONTREAL



5242 Park Ave.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍԲ. ԵԿԵՂԵՑԻ
ՄՈՆՐԵԱԿ

PARISH COUNCIL

ԵԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

28 Յուլիս 1965

Գերաշնորհ

Տէր Սիոն Ս. Արք. Մանուկեան

Բարեխնամ Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի

նիւ Եորթ

Գերաշնորհ Ս. Հայր,

Այսու կը ներկայացնենք Ձերը Սրբազնութեան, Ծխական Խորհրդոյս 1964-1965 տարեշրջանի տեղեկագիրը, որուն մէջ ամփոփ կերպով յայտնած ենք, մեր 1964 ՄԱՐՏի ընտրութենէն ետք ունեցած գործունէութիւնը:

Նախ եւ առաջ ունեցանք հետեւեալ հասութարեր ձեռնարկները.

Ա.- ՊԱՐԱՀԱՆԴԷՍ ՄԸ, Ապրիլ 4 1964-ին:

Բ.- ԵՐԵՔ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍՆԵՐ Եւ

Գ.- ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ ՄԸ, Նոյեմբեր 28 1964-ին:

Ունեցանք նաեւ կազմակերպական գործունէութիւն, որոնց կարգին

Ա.- Վերակազմեցինք ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹԻՒՆԸ:

Բ.- Մշակութային գործունէութեան զարկ տալու համար, ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԱԸ ճոխացուցինք արուեստասէր անդամներով եւ կազմեցինք ՄԱ-ՄԻԿՈՆԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ, զոր կանոնաւոր եւ յաճախակի իր կազմակերպած ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԵՐԵԿՈՅԹՆԵՐՈՎ մեծ խանդավառութիւն կը ստեղծէ զարուստի մէջ:

Շնորհիւ գաղութիս Հոգեւոր Հովիւ Արք. Տ. Ղեւոնդ ՔՀՆՅ. Փափազեանի, եւ անոր թափած անխոնջ ջանքերուն, ԲՈՒՐԱՍՏԱՆ ամսաթերթը հասաւ նախան-ձելի բարձրութեան մը, որակով եւ քանակով /32 էջ, Տպաքանակ 600/:

Ասոնց կարգին ամենակարեւորը եղաւ կազմութիւնը՝ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԾԻՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՄԲԻՆ, որ լծուած ըլլալով լուրջ աշխատանքի, արդէն իսկ հոգի զնման վերաբերեալ պաշտօնական ձեւակերպութիւններ կը կատարէ ընկերութեան մը հետ:

Կիրակի, Ապրիլ 4, 1965-ին գումարուած Տարեկան Ընդհ. Ժողովը, վերընտրեց վիճակաւ դադրած մեր երեք անդամները, երկպատիկ ցանկի մը վերայէն, որք ահաւասիկ.

1.- Տոթթ. Արթ	ՏէՄԻՐՃԵԱՆ	55
2.- ԽՈՐԷՆ	ՏՈՂՐԱՄԱՃԵԱՆ	54
3.- ԿԱՅԾԱԿ	ՅՂԻԿԵԱՆ	40
4.- Տոթթ. ՅԱԿՈՐ	ԳԱՐԱԿԷՅԹԵԱՆ	23
5.- ՊԵՏՐՈՍ	ԳԻԻՉԻԻՔԵԱՆ	9
6.- ԱՆԴՐԱՆԻԿ	ՀԻԻՐ	3

Հաշուեքննիչ Մարմնոյ անդամ ընտրուեցան, ձեռամբարձ քուէարկութեամբ

Պ. ԳԱՐԼՅ ԿԻՒՐԻԻՆԼԵԱՆ եւ Պ. ՂԱԶԱՐ ՊԱԼԹԱՃԵԱՆ

Tel. CR 9-3066

ARMENIAN
HOLY APOSTOLIC CHURCH
MONTREAL



5242 Park Ave.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍԲ. ԵԿԵՂԵՑԻ
ՄՈՆՏՐԻԱԼ

PARISH COUNCIL

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ձայս հաղորդելով Ձերդ Սրբազնութեան առ ի գիտութիւն,
Կը մնամք որդիական ամենախորին ակնածանժք

ի դիմաց Ծխական Խորհրդոյ

Ատենադպիր

Ատենապետ

Խ. Տողրամաճեան *Տոթ. Ա. Տէմիրճեան*

Խ. Տողրամաճեան

Տոթ. Ա. Տէմիրճեան

— Խաչատրեան Կոմիտէի Կոչումով Տողրամաճեան, Կ.
Արմենիայ